ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 289 - Ա

«ՍԻԹԻ ՕՖ ՍՄԱՅԼ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՔԱՂՑԿԵՂ ԵՎ ԱՐՅԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Սիթի օֆ սմայլ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 111,510,772 դրամ արժողությամբ «Աջակցություն քաղցկեղ և արյան հիվանդություն ունեցող անձանց» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Սիթի օֆ սմայլ» բարեգործական հիմնադրամի (ՀՎՀՀ՝ 00464744) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ազադ Ֆարմայութիքլզ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 02235575) 2022 թվականի նոյեմբերի 28-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի ապրիլի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում դեղորայքի ձեռքբերում՝ 3,333,333.34 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ալֆա-ֆարմ իմպորտ» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 02606482) 2022 թվականի նոյեմբերի 28-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի ապրիլի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում դեղորայքի ձեռքբերում՝ 5,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Աստերիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01537077) 2022 թվականի նոյեմբերի 28-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի ապրիլի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում դեղորայքի ձեռքբերում՝ 30,724,083 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ԱՐՄԵՆԻԱ ԻՆԿԱՍԱՑԻՈՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 02260596) 2019 թվականի հունիսի 20-ին կնքված՝ եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի ապրիլի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում կանխիկ դրամի ընդունման, փոխադրման (տեղափոխման), հանձնման բանկ կամ հակառակ ուղղությամբ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում դրամապահոցներում ժամանակավոր պահպանության ծառայությունների մատուցում՝ 1,183,333 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «ԷՆՋԻ ՀՈԼԴԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00240216) 2022 թվականի նոյեմբերի 28-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի ապրիլի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում դեղորայքի ձեռքբերում՝ 10,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Թեոֆարմա Իմպորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00471216) 2022 թվականի նոյեմբերի 28-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի ապրիլի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում

դեղորայքի ձեռքբերում՝ 15,136,328 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Նունե Եղիազարյան Պլյուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00237505) 2022 թվականի նոյեմբերի 28-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի ապրիլի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում դեղորայքի ձեռքբերում՝ 8,333,333.33 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Վիոլետա ֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01044241) 2023 թվականի հունվարի 4-ին կնքված՝ N 10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի ապրիլի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում դեղորայքի ձեռքբերում՝ 8,333,333.33 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

9) «Ֆարմատեք» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01818051) 2022 թվականի նոյեմբերի 28-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի ապրիլի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում դեղորայքի ձեռքբերում՝ 23,167,027 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

10) «Երևան-Աուդիտ Կոնսալտ» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 02703411) 2018 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի ապրիլի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում հաշվապահական հաշվառման ծառայությունների մատուցում՝ 6,300,000 (ամսեկան՝ 300,000 դրամ) դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Սիթի օֆ սմայլ» բարեգործական հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ

կետով սահմանված կարգով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

18.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ